

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ

ԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բանալի բառեր – պետական պարտք, արտաքին պետական պարտք, տնտեսական աճ, արտահանում, զբաղվածություն


ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական հետազոտությունները տարանջատում են տնտեսական աճի վրա մեծ պետական պարտքի բացասական ազդեցության ներքոհիշյալ հետևանքները.

1. Առաջինն այսպես կոչված պարտքի վերածածկի (debt overhang) հայեցակարգն է, որն առաջարկվել է ամերիկացի տնտեսագետներ Կրուգմանի¹ և Մաքսի² կողմից: Այս հայեցակարգը իրենից ներկայացնում է այնպիսի իրավիճակ, երբ պետական պարտքի աճը նվազեցնում է ապագա եկամտի վերաբերյալ ինչպես հայրենական, այնպես էլ օտարերկրյա ներդրողների սպասումները, քանի որ ներդրողները սպասում են, որ ներկայումս կուտակվող պետական պարտքը ապագայում մարվելու է խեղաթյուրող հարկերի ավելացման հաշվին: Այսինքն՝ տեղի է ունենում ներդրումների արտամղում, որն էլ իր հերթին դանդաղեցնում է երկարաժամկետ տնտեսական աճի համար անհրաժեշտ կապիտալի պաշարի կուտակման գործընթացը:

¹ **Krugman P.**, Financing vs. forgiving a debt overhang, Journal of Development Economics 29(3):253–268, 1988.

² **Sachs J.**, The Debt Overhang of Developing Countries. In Debt, Stabilization and Development, Oxford: Basil Blackwell, 1989.



Գրաֆիկ 1. Լաֆֆերի կոր

Այս հայեցակարգը ներկայացվում է պարտքի Լաֆֆերի կորի միջոցով, որը փաստում է, որ պետական պարտքի մեծ պաշարը նվազեցնում է ապագայում պարտքի մարման հավանականությունը: Հարկման ցածր դրույքաչափերը կխթանեն արտադրության զարգացմանը, հետևաբար՝ գործազրկության կրճատմանը: Արդյունքում՝ կրնդլայնվի հարկային բազան, իսկ հարկման դրույքաչափերի անընդհատ բարձրացումը կհանգեցնի արտադրողների շահագրգռվածության նվազմանը, ուստի և՛ արտադրության չափերի կրճատմանը: Դրանից, հարկավ, կտուժի պետական բյուջեն: Ստացվում է, որ մեծ պետական պարտքի դեպքում, ավելացնելով հարկերի չափը, պետությունը առաջացնում է հարկերի խեղաթյուրող էֆեկտ, որի միջոցով սահմանափակում է տնտեսական աճը:¹

2. Պետական պարտքի բարձր մակարդակի դեպքում պետությունը ավելի քիչ պատրաստ կլինի իրագործել դժվար և ծախսատար կառուցվածքային փոփոխություններ և ներդրումներ, քանի որ դրանց արդյունքում ապագայում ստեղծված արդյունքի մի մասը պետք է փոխանցվի օտարերկրյա վարկատուներին՝ արտաքին պարտքի մարման տեսքով: Ստեղծված իրավիճակը իր հերթին կարող է ազդել նաև մասնավոր հատվածի ներդրումների արդյունավետության և արտադրողականության վրա, կարող է նվազեցնել մասնավոր հատվածի կողմից տեխնոլոգիանե-

¹ Barro R., On the Determinants of the Public Debt, Journal of Political Economy, Vol. 85 (5), pp. 940–71, 1979

րի բարելավման և ռեսուրսների արդյունավետ օգտագործման խթանները, որի արդյունքում ներդրումները կարող են ուղղվել կարճաժամկետ արդյունք ապահովող ծրագրերին, որոնք իրենց հերթին խոչընդոտներ կստեղծեն երկարաժամկետ տնտեսական աճի համար¹:

3. Մեծ պետական պարտքը տնտեսական աճի վրա ազդում է նաև լրացուցիչ գնաճի ստեղծման ճանապարհով, օրինակ էմիսիայի պատճառով²:

Մեծ պետական պարտքը բարձրացնում է երկրի ռիսկայնությունը և անվճարունակության հավանականությունը³ և, հետևաբար նվազեցնում կառավարության հանդեպ ներդրողների, այլ տնտեսվարող սուբյեկտների, միջազգային վարկատուների և նաև քաղաքացիների վստահությունը, ինչը կարող է բարձրացնել երկրից կապիտալի դուրս բերման ռիսկը, քանի որ միջազգային ֆինանսական շուկաներում երկրի ակտիվների նկատմամբ պահանջարկը կարող է կտրուկ նվազել⁴:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

DEC-MFM երկարաժամկետ աճի մոդելն (LTGM) օգտագործելով՝ մենք սովորական վիճակի պահպանման դեպքում (BAU) աճը համեմատում ենք աճի այնպիսի հետագծի հետ, որի համար աշխատանքի և կապիտալի արտադրողականության, աշխատուժի մասնակցության բարձրացմանը և ավելի մեծ ներդրումներին ուղղված բարեփոխումների փաթեթը շահեկան է: LTGM-ն հիմնված է Սոլոու-Սվանի (Solow-Swan) աճի մոդելի վրա, սակայն ընդլայնվել է մարդկային կապիտալը, ժողովրդագրական և աճը պայմանավորող այլ գործոնները ներառելու համար, որոնք կարևոր են զարգացող երկրների համար: Մոդելը հետևում է նաև եկամտի բաշխվածությանը: Անհավասարության ցուցանիշում փոփոխություն-

¹ **Fosu A. K.**, The Impact of External Debt on Economic Growth in Sub-Saharan Africa, Journal of Development Economics, 1996.


² **Sargent T.**, Wallace N., Some Unpleasant Monetarist Arithmetic, Quarterly Review, Federal Reserve Bank of Minneapolis, 1981

³ **Savvides A.**, Investment Slowdown in Developing Countries during the 1980s: Debt Overhang or Foreign Capital Inflows? Kyklos, 1992

⁴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ - Նաբեկ Ալբերտի Ամիրյան, ԵՐԵՎԱՆ 2018 <http://dspace.paara.am/xmlui/bitstream/handle/123456789/84/%D4%B1%D5%B4%D5%AB%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%86%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF.pdf?sequence=1&isAllowed=y>

ների բացակայության դեպքում տնտեսական աճի միջոցով բոլոր եկամուտներն ավելանում են, ինչը նվազեցնում է աղքատությունը, երբ աճը մարդկանց աղքատության գծի երկայնքով բարձրանում է: Ի տարբերություն դրա, անհավասարության աճի ավելացումն աղքատությունը նվազեցնելու հարցում պակաս արդյունավետ է դառնում: Ինչպես ելակետային, այնպես էլ սցենարային հիմնական եզրակացությունները հետևյալն են. սկզբնական հաշվարկային տարին 2016 թվականն է, սկզբնական կապիտալ-ՀՆԱ հարաբերակցությունը 2.7 է, մեկ շնչին բաժին ընկնող սկզբնական ՀՆԱ-ն 3 640 ԱՄՆ դոլար է (2016 թ. ԱՄՆ դոլարով), արժեզրկման ցուցանիշը 2.7 տոկոս է, աշխատուժի մասնաբաժինները հաստատուն 62.5 տոկոս են և սկզբնական աշխատաշուկայում մասնակցության ցուցանիշը՝ 66.9 տոկոս: Ժողովրդագրական դինամիկայի տվյալները ստացվել են Համաշխարհային բանկի բնակչության գնահատականներից և ծրագրերի տվյալների շտեմարանից:

Գծապատկեր 1. Մեկ շնչին բաժին ընկնող իրական ՀՆԱ-ի աճի տեմպը



* Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի աշխատակիցների հաշվարկները:

Ելակետը ցույց է տալիս BAU-ն՝ ենթադրելով վերջին միտումների շարունակությունը և դիտարկելով պատմական միտումները: Հետևյալ ենթադրությունները հետագա բացատրություն են պահանջում, քանի որ դրանք կփոփոխվեն բարեփոխման սցենարում: Առաջին՝ աճը սահման-

վում է 1.0 տոկոս, ինչը փոքր-ինչ բարձր է ողջ երկրի մեդիանից և մոտ է Հայաստանի՝ 2005-2014 թթ. պատմական միջին՝ 1.3 տոկոս ցուցանիշին (PWT9): ԸԳԱ աճը ծայրահեղ տատանողական է եղել անցյալում: Օրինակ՝ աճը մինչև 2005 թ. որոշ տարիների 10 տոկոսից բարձր էր, իսկ վերջին տարիներին բացասական է եղել:

Ի վերջո, ենթադրվում է, որ Ջինի գործակցի վերընթաց միտումը կշարունակվի՝ մինչև 2030 թվականը բարձրանալով մինչև 36.7 և դրանից հետո հաստատուն պահպանվելով: Ջինի գործակիցը 2005-2014 թթ. տարեկան բարձրացավ 0.33-ով՝ 2009 թ. 29.9-ից 2014 թ. կազմելով 31.5, իսկ բարեկեցության բաշխվածության ստորին հատվածում եկամուտները, մնացած բնակչության եկամուտների համեմատ, ավելի դանդաղ տեմպով աճեցին: Եթե ենթադրում ենք, որ այս միտումը կշարունակվի մինչև 2030 թվականը, Ջինի գործակիցը մինչ այդ տարի կկազմի 36.7: Դա Հայաստանի համար անիրատեսական մակարդակ չէ, եթե Ջինի գործակիցը 2004 թվականին 37.5 էր:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2018-2019 թթ., երբ արձանագրվել էր իրական ՀՆԱ աճ, ՀՀ պետական բյուջե են հավաքագրվել համապատասխան տարիների պետական բյուջեների մասին օրենքներով նախանշված ցուցանիշները գերազանցող հարկային եկամուտներ և տուրքեր, որի հետևանքով էլ այդ տարիներին՝ ՀՀ պետական բյուջեի պակասորդը զիջել է նախանշված ցուցանիշներին՝ պայմանավորված նաև ՀՀ պետական բյուջեի ծախսերի կրճատմամբ, իսկ բյուջեի պակասորդը ֆինանսավորվել է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին աղբյուրների հաշվին¹:


ՀՀ Կառավարության պարտքը 2018-2019 թթ., նախորդ տարիների համեմատությամբ, ավելացել է ՀՀ պետական բյուջեի պակասորդը գերազանցող մեծությամբ, ինչը նշանակում է, որ ՀՀ Կառավարությունը պարտք է վերցրել՝ այլ ծրագրեր կամ ընթացիկ ծախսերը ֆինանսավորելու նպատակով:

2020 թ. պետական բյուջեի պակասորդը և դրա հետևանքով պարտքը ավելացան, և պակասորդը մոտ 2 անգամ գերազանցեց «ՀՀ 2020 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում նախանշված ցուցանիշը (հոդված 3)՝ կազմելով 334.76 մլրդ ՀՀ դրամ, իսկ պետական բյուջեի պակասորդ/ՀՆԱ

¹ ՀՀ 2018-2019 թթ. պետական բյուջեի մասին օրենքների հոդվածներ 2-3, 6: ՀՀ ֆինանսների նախարարության «ՀՀ պետական բյուջեի տարեկան ցուցանիշներ» առցանց տվյալների բազա, https://minfin.am/hy/page/_hy_chart/

հարաբերակցությունը՝ 5.40%՝ 2018-2019 թթ. համապատասխանաբար 1.75 և 0.98%-ի համեմատությամբ: Ընդհանուր առմամբ, նախքան տնտեսական անկումը, տվյալ օրենքով (հոդված 3) ՀՀ Կառավարությունը նախատեսում էր հիմնականում ներքին պարտքի ավելացման շնորհիվ ֆինանսավորել պակասորդը¹:

Գծապատկեր 2. ՀՀ պետական պարտքը 2010-2020թթ. (մլրդ դրամ)²



2020 թ. ՀՀ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կազմեց 67.37%, իսկ 2021 թ. կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կազմելու է 66%³: 2021 թ. պետական ֆինանսների «ոսկե կանոնները» չեն պահպանվելու, և օգտագործվելու են «հարկաբյուջետային կանոնների համակարգով նախատեսված բացառիկ դեպքի կարգավորումները»⁴, իսկ միջնաժամկետ հատվածում նախատեսվում է ծախսերի կտրվածքով խնայողությունների հաշվին բարելավել ծախսերի կառուցվածքը, ինչպես նաև ձեռնարկել քայլեր եկամուտների ավելացման նպատակով: Դրա արդյունքում պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կսկսի նվազել, և ակն-

¹ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ Կառավարության 2020 թվականի բյուջետային ուղերձ - բացատրագիր, Եր., 2019, էջ 109, 128: Հաշվարկը՝ հեղինակների:

² ՀՀ վիճակագրական կոմիտե www.armstat.am

³ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ Կառավարության 2021 թվականի բյուջետային ուղերձ- բացատրագիր, Եր., 2020, էջ 90:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 94-95:

կալվում է, որ 2026 թ. ՀՀ Կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը չի գերազանցի 60%-ը, և վերջինս միջնաժամկետ հատվածում հիմնականում պայմանավորված է լինելու տնտեսական աճով¹:

ՔՆՆԱՐԿՈՒՄ


ՀՀ Կառավարությունը, նախքան 2020 թ. արձանագրված տնտեսական անկումը, փորձում էր կրճատել պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը: Կանխատեսվում էր, որ 2026 թ. կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը չի գերազանցի 60%-ը, և տնտեսական աճը միջնաժամկետ հատվածում կհանգեցնի այդ հարաբերակցության կրճատմանը, որն, իր հերթին, կնպաստի հարկային եկամուտների աճին, հակառակ դեպքում, վատագույն սցենարով, կարող է պարտքային ճգնաժամ արձանագրվել, եթե ՀՀ Կառավարությունը չկարողանա կատարել իր ստանձնած պարտավորությունները՝ հատկապես արտաքին պարտքի կտրվածքով: Մյուս կողմից՝ արտաքին շուկերով պայմանավորված, ներքին պահանջարկի և արտահանման ծավալների կրճատում կարող է արձանագրվել, ինչն էլ ճնշումներ կարող է գործադրել ՀՀ արժույթի վրա: Դա կարող է ազդել մասնավոր ընկերությունների վերցրած վարկերի վերադարձելիության վրա (անհուսալի՝ հատկապես արտարժույթով տրամադրված վարկերի քանակի աճ), և բացասական զարգացումները կարող են վատագույն սցենարի դեպքում արժույթային, ինչպես նաև բանկային ճգնաժամի պատճառ դառնալ, որն էլ, իր հերթին, կազդի ՀՀ Կառավարության՝ ստանձնած պարտավորությունները (արտահանման, ներմուծման, տրանսֆերների կրճատման հետևանքով բյուջե փոխանցվող անուղղակի և ուղղակի հարկերի կրճատմամբ պայմանավորված) սպասարկելու կարողության վրա: Իսկ ընթացիկ հաշվի խորացող անհավասարակշռության հետևանքով ազգային արժույթի արժեզրկումը կարող է դժվարացնել արտաքին պարտքի սպասարկումը և մարումը (հատկապես՝ երբ արտաքին պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը բավականին մեծ է), ինչն էլ կարող է հանգեցնել պարտքային ճգնաժամի:

Մյուս կողմից՝ կապիտալ ներդրումները (պարտքային միջոցների շնորհիվ իրականացվող) պետք է ուղղվեն այն ծրագրերին, որոնք կնպաստեն ավելի բարձր տնտեսական աճի տեմպերի ապահովմանը, այլ ոչ թե

¹ Տե՛ս նույն տեղը, էջ 95-96:

այն ծրագրերին, որոնք լավ մշակված չեն, և որոնց տնտեսական աճին նպաստումը բավականին ցածր մակարդակում է:¹

Գծապատկեր 3. ՀՀ արտաքին պետական պարտքը 2010-2020թթ. (մլրդ դրամ)²



Հայաստանը սերտորեն կապված է Ռուսաստանի տնտեսության հետ, հիմնականում՝ առևտրի, դրամական փոխանցումների և ներդրումների կապուղիներով: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի արտահանման և ներմուծման հիմնական ծագման և նշանակման շուկան է, կազմելով ընդհանուրի գրեթե հինգերորդ մասը: Ռուսաստանը Հայաստանի մետաղների և գյուղատնտեսական արտադրանքի հիմնական գնորդն է և Հայաստանի ներմուծման (մատակարարելով իր մեքենաներն ու սարքավորումները) և էներգիայի կարիքների գլխավոր (ներառյալ բնական գազը, նավթը և ատոմային վառելիքը) աղբյուրը: Ռուսաստանի Դաշնությունում զբաղված Հայաստանի աշխատողների դրամական փոխանցումները հանդիսանում են երկու տնտեսությունների միջև մեկ այլ կրիտիկական կապ (պարբ. 11): Ռուսաստանի Դաշնությունը լայնածավալ շահեր ունի Հայաստանի տնտեսության մի քանի ռազմավարական ոլորտներում, ինչպիսիք են՝ էներգետիկան, տրանսպորտը և հաղոր-

¹ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՇԵՄԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» - ԱՆՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ, ԱԼԲԵՐՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, <https://asue.am/upload/files/science/banber/2021-year-4/3.pdf>

² ՀՀ վիճակագրական կոմիտե www.armstat.am

դակցությունները:¹ Ի լրումն Ռուսաստանի և Հայաստանի տնտեսությունների միջև ուղղակի կապի, Ռուսաստանի Դաշնությունն անուղղակիորեն «փոխանցում է» նաև եվրագոտու «ազդեցությունները»՝ առևտրի, դրամական փոխանցումների, ՕՌԻՆ-ի և բանկային կապուղիներով:²

Ռուսաստանի տնտեսությունը, որը նույնիսկ մինչև ուկրաինական հակամարտությունն,³ արդեն իսկ կառուցվածքային մարտահրավերների պատճառով դանդաղում էր, տուժում է ընթացիկ աշխարհաքաղաքական իրավիճակի անհստակություններով: Կապիտալի արտահոսքը 2014թ. առաջին կեսում զգալի աճել է՝ մինչև \$75 միլիարդ: Սպառման աճի նվազման, ներդրումների հետագա անկման և ներդրողների բացասական սպասումներով պայմանավորված, տնտեսական աճի գնահատականները տատանվում են 2014թ.՝ 0.2%-ից 2015թ.՝ -0.9% անկման միջակայքում: Այնուհանդերձ, հաշվի առնելով Ռուսաստանի հսկայական բուֆերները (ինչպիսիք են միջազգային խոշոր պահուստները և ցածր արտաքին պարտքը), աշխարհաքաղաքական լարվածությունների աստիճանական կարգավորումը կարող է բերել տնտեսական վերականգման 2015թ.՝ ԱՄՆ կողմից գնահատված 1%:⁴

2013թ. սեպտեմբերին, Հայաստանը որոշեց միանալ Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի Դաշնության Մաքսային Միությանը և Միանական Տնտեսական Տարածքին (ՄՏՏ), վերջնադրյունքում միանալով Եվրասիական Տնտեսական Միությանը (ԵՏՄ):⁵ Մաքսային Միությանը և ՄՏՏ-ին միանալու Հայաստանի ճանապարհային քարտեզը ստո-

¹ Նշելու համար երկու օրինակ. Գազպրոմը, Ռուսաստանի Դաշնության պետական գազային մենաշնորհը, ներկայումս ՀայՌուսԳազարդի՝ Հայաստանի ազգային գազաբաշխիչ ցանցի սեփականատերն է, իսկ Ռուսական Երկաթուղիները տնօրինում է Հայկական Երկաթուղիների վերահսկիչ փաթեթը: Հայաստանում գործունեություն են ծավալում հազարից ավելի ռուսական ընկերություններ:

² Չնայած Հայաստանի տնտեսական հեռանկարի ընդհանուր ռիսկը ներկայումս նվազման ուղղությամբ է (ինչպես վերը քննարկվեց), Ռուսաստանի տնտեսության հետ կապերը կարող են ունենալ նաև որոշակի առավելություններ. Ռուսաստանի Դաշնությունը շահել է նավթի և հումքի բարձր գներից և այն կարող է կարգավորիչ դեր խաղալ ներքին տնտեսական ցնցման դեպքում:

³ Ռուսաստանի ՀՆԱ-ն գրանցեց 1.3% աճ 2013թ., համեմատած 2000 ականների կեսերի միջին տարեկան 7%-ի հետ:

⁴ ԱՄՆ. Հոդված IV-ի խորհրդակցությունների ավարտի մամուլի հաղորդագրություն. 1 հուլիսի 2014

⁵ ԵՏՄ հիմնադրման համաձայնագիրը ստորագրվել է Աստանայում 2014թ. մայիսի 29-ին Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի Դաշնության նախագահների կողմից: ԵՏՄ-ն գործունեությունը պետք է սկսի 2015թ. հունվարից.

րագրվեց 2013թ. դեկտեմբերին, իսկ Հայաստանի՝ ԵՏՄ-ին միանալու համաձայնագիրը ստորագրվեց 2014թ. հոկտեմբերին: Հայաստանի տնտեսությունը միջնաժամկետից երկարաժամկետ առումներով, հավանաբար կարող է շահել ԵՏՄ ընդլայնված սպառողական շուկայում¹ ապրանքների և ծառայությունների առևտրի աճից, առևտրի ոչ սակագնային խոչընդոտների նվազումից, աշխատուժի և կապիտալի առավել արդյունավետ շարժից ու հավանաբար, մեծ ՕՈՒՆ-ից: Ի լրումն, անդամակցությունը Մաքսային Միությանն օգնեց ճանապարհի հարթել Ռուսաստանի Դաշնության հետ նոր՝ 5-ամյա գազային պայմանավորվածության համար 2013թ. դեկտեմբերին, երաշխավորելով 2014թ հունվարից \$189/1,000 խմ բազային գին: Այնուհանդերձ, Հայաստանի անդամակցությունը ՄՄ/ԵՏՄ-ին կարող է ունենալ այլ ազդեցություններ տնտեսության վրա² և տարածաշրջանային ինտեգրացիոն այս նախաձեռնություններին անդամակցության ամբողջական առնչությունները դեռևս հստակ չեն:

Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման բնագավառում շատ բան պայմանավորված կլինի Ռուսաստանի տնտեսության դինամիկայով և ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցության գուտ ազդեցություններով: Այս ինտեգրումից վերը նշված օգուտների իրացման հիմնականը կլինի ոչ սակագնային միջոցառումների վերացումը և ներքին քաղաքականության հաջողությունը՝ ուղղված մաքսային ծառայությունների բարելավմանը, կանոնակարգված բիզնես միջավայրին և ընդհանուր առմամբ, լավ կառավարմանը: Երկրի գործընկերության ռազմավարությունը, որի կիզակետում են տրանսպորտը, քաղաքային զարգացումը և էներգետիկ ենթակառուցվածքները,³ ինչպես նաև գիտելիքային լուծումներն ու մասնավոր

¹ ԵՏՄ երեք անդամ երկրների ընդհանուր շուկան կազմում է 170 միլիոն մարդ:


² Դրանք կարող են ներառել Հայաստանի ներկայիս ազատական սակագնային պաշտպանության մակարդակի հնարավոր բաձրացումը Մաքսային Միության Ընդհանուր արտաքին սակագների մակարդակին (ու դրան հաջորդող վերաբանակցություններ Առևտրի համաշխարհային կազմակերպության հետ, որին Հայաստանն անդամ է 2003թ.-ից), ներմուծման բարձր գներ ու բարձր գնաձ, և երկարաժամկետ հատվածում, կապիտալ ապրանքների շուկայի փոխարինում ռուսական և անկախ պետությունների համագործակցության երկրների տեխնոլոգիաներով:

³ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ԱՄՓՈՓ) - Երկրի Գործընկերության Ռազմավարություն. Հայաստան, 2014-2018 <https://www.adb.org/sites/default/files/linked-documents/cps-arm-2014-2018-ea-hy.pdf>

հատվածի զարգացումը լավ «դիրքավորված» է՝ աջակցելու Հայաստանին ստանալու ԵՏՄ-ին ինտեգրման իր պոտենցիալ տնտեսական օգուտները:¹

Միայն 2020 թվականին ՀՀ արտահանման ծավալը կազմել է 3016.0 մլն. ԱՄՆ դոլար (տես՝ գծապատկեր 4)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճի ցուցանիշը կազմել է 118.9 (%): Աճի նման ցուցանիշը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Նախ 2020 թվականին կորոնավիրուսային համավարակով պայմանավորված սահմանափակումները, արցախյան երկրորդ պատերազմը, ինչպես նաև ռուս-ուկրաինական հակամարտությունը:

Գծապատկեր 4. ՀՀ արտահանումը 2010-2021թթ. (ԱՄՆ դոլար)²




Գծապատկեր 5-ը ցույց է տալիս, որ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն զգալիորեն աճել է: 2017 -2050 թթ. ընթացքում ՀՆԱ-ի միջին աճի ցուցանիշը կկազմի 3.4 տոկոս և մեկ շնչի հաշվով՝ 3.7 տոկոս: Դա բավարար կլինի, որ Հայաստանը մինչև 2050 թվականը հասնի բարձր եկամտային կարգավիճակի (գծապատկեր 5):

¹ ԱԶԲ-ն կարող է բերել Կենտրոնական Ասիայի Տարածաշրջանային Տնտեսական Համագործակցության ծրագրի փորձառությունն ու լավագույն փորձը, ներառյալ նաև իր գործունեությունը տրանսպորտի, լոգիստիկայի, էներգետիկայի և առևտրի քաղաքականության ու առևտրի դյուրացման բնագավառներում

² ՀՀ վիճակագրական կոմիտե www.armstat.am

Գծապատկեր 5. Մեկ շնչին բաժին ընկնող իրական ՀՆԱ-ի մակարդակը (ԱՄՆ դոլար)



* Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի աշխատակազմի հաշվարկները:

Դա էական ազդեցություն ունի ՀՆԱ-ի աճի տեմպի վրա: Ինչպես վերը տեսանք, կանխատեսվում է, որ BAU տարեկան իրական ՀՆԱ-ի աճը մինչև 2050 թվականը 1.8 տոկոս կկազմի: Բայց եթե կառավարությանը հաջողվի կասեցնել բնակչության նվազումը, աճը կավելանա 0.3 տոկոսային կետով (գծապատկեր 5): Միաժամանակ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի աճը փոքր-ինչ կփոխվի, սակայն հակառակ ուղղությամբ՝ միջինը 2.1 տոկոսից 2.0 տոկոսի: Բնակչության ծերացումն էլ ավելի մեծ ազդեցություն ունի ՀՆԱ-ի աճի վրա: Ներկայումս Հայաստանը ծերացող բնակչություն ունի, և կանխատեսվում է, որ այս միտումը մինչև 2030-ականների սկիզբը կպահպանվի: Ակնկալվում է, որ կմեկնարկի վերականգնման փուլը, թեև ոչ կայուն. մինչև աշխատունակ տարիքի և ընդհանուր բնակչության հարաբերակցությունը ևս մեկ անգամ կսկի նվազել: Եթե ենթադրենք, որ 2017թ. կառավարությանը հաջողվում էր կասեցնել այս միտումը և մինչև 2050 թվականը կարող է աշխատունակ տարիքի և ընդհանուր բնակչության հաստատուն հարաբերակցությունը պահպանել, ապա այն զգալի և դրական ազդեցություն կունենա ինչպես ՀՆԱ-ի, այնպես էլ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի աճի վրա: Հակառակ դեպքում՝ առանց ծերա-

ցող բնակչության, իրական ՀՆԱ-ի աճը կավելանա՝ միջինը 1.8 տոկոսից 2.1 տոկոսի, նմանատիպ աճ, որն առաջանում է բնակչության նվազումը կասեցնելու դեպքում: Սակայն չծերացման սցենարում մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն ևս կաճի 0.3 տոկոսային կետով՝ կազմելով 2.4 տոկոս: Ելակետի հիման վրա կատարվող ժողովրդագրական զգայունության վերլուծությունը ցույց է տալիս, որ բարեփոխումների փաթեթը լրացուցիչ միջոցառումներով լրացնելու զգալի հնարավորություններ կան: Բնակչության նվազման և ծերացման միտումը կասեցնելը կամ առնվազն պակասեցնելը կհանգեցնի իրական ՀՆԱ-ի աճի զգալի բարելավումների: Երբ խոսքը վերաբերում է մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի աճին, հենց միայն ծերացումը կասեցնելու կամ սահմանափակելու միջոցառումները դրական արդյունքներ կբերեն: Այն ամենը, ինչը հիմնավորված է BAU-ի վերլուծության համար, ճիշտ է նաև բարեփոխումների փաթեթի սցենարի դեպքում. բնակչության հաստատուն թիվը կբարձրացնի միջին իրական ՀՆԱ-ի աճը մինչև 3.6 տոկոսի (և մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի աճը կնվազեցնի մինչև 3.6 տոկոսի), աշխատունակ տարիքի և ընդհանուր բնակչության ցուցանիշը հաստատուն պահելու դեպքում մեկ շնչին բաժին ընկնող միջին իրական ՀՆԱ-ի աճը կբարձրանա մինչև 3.7 տոկոս և 4.0 տոկոս:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համեմատաբար փոքր ներքին շուկայում այս ամենն անելու համար Հայաստանին անհրաժեշտ է իր աճը վերահավասարակշռել արտահանման ուղղությամբ և արտասահմանում բացել նոր շուկաներ՝ արտաքին պահանջարկից ավելի մեծ չափով օգտվելու համար: Դրան կարող են նպաստել ներդրումները բազմաուղի հաղորդակցության մեջ, առևտրի և տրանպորտի դյուրացումը, S2S-ները և դրանք հնարավոր դարձնող այլ գործոնները, օրինակ՝ հայկական սփյուռքը, և առևտրի ու ներդրումային քաղաքականությունը, ներդրումային միջավայրի բարեփոխումները և շուկա ազատ մուտք ու ելքի հնարավորությունը որպես լծակ օգտագործելը: Անհրաժեշտ է կապ ստեղծել այսպիսի բարեփոխումների և կրթության ու հմտությունների ուղղությամբ ներդրումների, ինչպես նաև արդյունավետ պաշտոնական զբաղվածությունից օգտվելու համար հավասար մուտքի ապահովման միջև: Սկիզբ է առնում դեպի ավելի լավ աշխատատեղեր կառուցվածքային փոփոխությունը, սակայն Հայաստանի խոշոր ոչ ֆորմալ հատվածում (մասնավորապես՝ գյուղատնտեսությունում) ցածր արտադրողականության փաստը մարտահրավերներ է առաջացնում: Կառուցվածքային վերափոխման արագացումը՝ փակ տնտեսությունից ազ-

րորիզնեսի և գյուղատնտեսությունից արտահանմանն ուղղված մշակող արդյունաբերության, բարեփոխումների փաթեթի կարևոր մաս պետք է կազմի: Արտադրողականության բարելավումները հատկապես կարևոր կլինեն աշխատունակ տարիքի բնակչության նվազման հետևանքներին դիմակայելու համար: Համընդհանուր բարգավաճում ապահովելու համար երկրին անհրաժեշտ է ավելի շատ և ավելի լավ օգտագործել աշխատանքային ռեսուրսները ավելի շատ և ավելի լավ աշխատատեղերի միջոցով՝ արձագանքելով նաև հմտությունների անհամապատասխանության հարցին:¹

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Barro R., On the Determinants of the Public Debt, Journal of Political Economy, Vol. 85 (5), 1979
2. Fosu A. K., The Impact of External Debt on Economic Growth in Sub-Saharan Africa, Journal of Development Economics, 1996.
3. Future Armenia: Connect, Compete, Prosper I A Systematic Country Diagnostic I NOVEMBER, 2017, <https://documents1.worldbank.org/curated/en/705041524658200814/pdf/124816-ARMENIAN-PULIC-Armenia-SCD-in-Arm-final.pdf>
4. Krugman P., Financing vs. forgiving a debt overhang, Journal of Development Economics 29(3): 1988.
5. Sachs J., The Debt Overhang of Developing Countries. In Debt, Stabilization and Development, Oxford: Basil Blackwell, 1989.
6. Sargent T., Wallace N., Some Unpleasant Monetarist Arithmetic, Quarterly Review, Federal Reserve Bank of Minneapolis, 1981
7. Savvides A., Investment Slowdown in Developing Countries during the 1980s: Debt Overhang or Foreign Capital Inflows? Kyklos, 1992
8. ԱՄՀ. Հոդված IV-ի խորհրդակցությունների ավարտի մամուլի հաղորդագրություն. 1 հուլիսի 2014
9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ - Նարեկ Ալբերտի Ամիրյան, ԵՐԵՎԱՆ 2018 <http://dspace.paara.am/xmlui/bitstream/handle/123456789/84/%D4%B1%D5%B4%D5%AB%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%86%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF.pdf?sequence=1&isAllowed=y>

¹ Future Armenia: Connect, Compete, Prosper I A Systematic Country Diagnostic I NOVEMBER, 2017, <https://documents1.worldbank.org/curated/en/705041524658200814/pdf/124816-ARMENIAN-PULIC-Armenia-SCD-in-Arm-final.pdf>

10. ՀՀ 2018-2019 թթ. պետական բյուջեի մասին օրենքների հոդվածներ 2-3, 6: ՀՀ ֆինանսների նախարարության «ՀՀ պետական բյուջեի տարեկան ցուցանիշներ» առցանց տվյալների բազա, https://minfin.am/hy/page/_hy_chart/

11. ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ Կառավարության 2020 թվականի բյուջետային ուղերձ - բացատրագիր, Եր., 2019, էջ 109, 128: Հաշվարկը՝ հեղինակների:

12. ՀՀ վիճակագրական կոմիտե www.armstat.am

13. ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ Կառավարության 2021 թվականի բյուջետային ուղերձ- բացատրագիր, Եր., 2020

14. «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՇԵՄԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» - ԱՆՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ, ԱԼԲԵՐՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, <https://asue.am/upload/files/science/banber/2021-year-4/3.pdf>

15. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ԱՄՓՈՓ) - Երկրի Գործընկերության Ռազմավարություն. Հայաստան, 2014-2018 <https://www.adb.org/sites/default/files/linked-documents/cps-arm-2014-2018-ea-hy.pdf>

Ани Григорян, Влияние внешнего государственного долга на экспорт и экономический рост - Количественного исследования внешнего государственного долга недостаточно для оценки эффективности использования внешнего долга.

В статье мы изучили влияние долга на экономический рост. Мы считаем, что для снижения зависимости от внешних обязательств необходимо обеспечить качественный экономический рост и высокий уровень занятости. Для обеспечения последнего приоритетами в РА являются промышленность, продвижение экспорта, развитие туризма, развитие информационных технологий и сельское хозяйство.

Используя модель долгосрочного роста DEC-MFM (LTGM), мы сравниваем рост в обычном режиме (BAU) с траекторией роста, для которой необходим пакет реформ, направленных на повышение производительности труда и капитала, участие рабочей силы и увеличение инвестиций. выгодный.

Из-за проблем с долговой стабильностью правительство РА вынуждено проводить ограничительную политику расходов, в результате чего сокращает капитальные вложения. Частные инвестиции также сократились в предыдущие годы. В ближайшие годы правительству РА придется выделять больше бюджетных средств на погашение долга (основных сумм и

процентных платежей), что может препятствовать увеличению ассигнований в другие отрасли, особенно в направлении капиталоемких отраслей.

Ani Grigoryan, The impact of external public debt on exports and economic growth - A quantitative study of external public debt is not enough to assess the efficiency of using external debt.

In the article, we studied the effect of debt on economic growth. We believe that in order to reduce dependence on external obligations, it is necessary to ensure quality economic growth and a high level of employment. In order to ensure the latter, industry, export promotion, tourism development, information technology development, and agriculture are priorities in RA.

Using the DEC-MFM long-run growth model (LTGM), we compare business-as-usual (BAU) growth to a growth trajectory for which a package of reforms to increase labor and capital productivity, labor force participation, and greater investment is beneficial.

Due to the problems of debt stability, the RA government is forced to conduct a restrictive spending policy, as a result of which it reduces capital investments. Private investments have also been reduced in previous years. In the coming years, the RA government will have to allocate more budget funds for debt payments (principal amounts and interest payments), which may hinder the increase of allocations to other sectors, particularly in the direction of capital-intensive sectors.

Ուղարկվել է խմբագրություն 27.10.2022թ.

Գրախոսվել է 01.11.2022թ.

Մտորագրվել է տպագրության 02.11.2022թ.